

«ՀԱՅՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ր Յ Ա Խ

■ Տարածքները վստահորէն վերահսկողութեան տակ առնուած են

Ղարաբաղեան ռազմաճակատին վրայ կացութիւնը լաւ բուած կը մնայ: Ղարաբաղեան ջոկատները վստահորէն որ կը հսկեն սահմանի հարաւ - արեւմտեան այն շրջանը, ուրտեղ նախապէս ատրպէյճանները կը հրթրակոծէին Հաղբութի շրջանի գիւղերը:

Ինչպէս հաղորդեցին ԼՂՀ պաշտպանական բանակի լրատուութեան ծառայութենէն, Ղարաբաղեան ջոկատները կը շարունակեն միակողմանի զինադադարը, որպէսզի խաղաղ բնակիչները կարողանան անխտանակ եւ ապահով կերպով տեղաշարժուիլ: Այս առիթով ատրպէյճանական հեռուստատեսութեան հաղորդման համաձայն, Իրանը ժամանակաւոր կերպով կամուրջ գետեղած է Արաքս գետի վրայ ատրպէյճանական բնակչութեան սահմանը ապահով կերպով անցնելու համար: Մարտական գործողութիւնները կը շարունակուին այդ հատուածի սահմանին վրայ:

\*\*\*

■ Խոջալուի մէջ գործարկուած է կաւագործարան մը

Եկող տարիէն սկսեալ Խոջալուի մէջ կը գործարկուի կաւագործարան մը, որու շինարարական աշխատանքները այժմ կ'իրականան «Արցախշինարկաթի» թիւ 6 շինարարական ու մոնթաժային վարչութեան կողմէ: Գործարանի արհեստագիտական սարքաւորումները հոն պիտի փոխադրուին Հայաստանի Արտաշատի շրջանի Ճեմատակիի գործարանէն, որու մասնագէտները եղած են Խոջալու եւ համոզուած, որ այնտեղ գոյութիւն ունի տեղական աղբիւրներու հարուստ ու լաւապէս օգտագործելի պաշար:

\*\*\*

■ Ազատամարտիկներու անուամբ փողոցի բացում

Ստեփանակերտի նախկին Կիրովի անուան փողոցը պատահաբար պիտի կոչուի «Ազատամարտիկներու» անուան: Յարգելով այդ փողոցին վրայ գտնուած 22 արցախորդիներու յիշատակը՝ քաղաքապետական խորհուրդը այս օրերուս կայացուց տուեալ որոշումը: Ի պատիւ ազատագրական պայքարի մէջ զոհուածներու՝ հանրապետութեան հրապարակին (նախկին Ստեփան Շահումեանի արձանի տեղ) պիտի կանդնեցուի զոհուածներու կերպարը խորհրդանշող յուշակոթող: Այժմ յայտարարուած է լաւագոյն քանդակի մրցում, որու որոշումը պիտի ստնուի տարեկերջին:

«ՀԱՅՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԵԱՀԻ Պատուիրակութեան Շփումները

ԵԱՀԻ նախագահ, Շուէտի արտաքին գործոց նախարար տիկին Մարկարէթ Աֆ Ուկլաս եւ իր գլխաւորած պատուիրակութեան անդամները հանդիպում ունեցան Գերագոյն հորիւրդի փոխ նախագահ Արտաշէս Թումանեանի եւ խորհրդարանի կուսակցական խմբակցութիւններու եւ պատգամաւորական խումբերու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման ընթացքին ԵԱՀԻ պատուիրակութեան անդամները ծանօթացան Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առընչութեամբ խորհրդարանին մէջ գոյութիւն ունեցող մօտեցումներուն:

Մտքերու անկաշկանդ փոխանակութեան ընթացքին խորհրդարանական խմբակցութիւններու ներկայացուցիչները մասնաւորապէս նշեցին, որ այս հարցին մէջ խորհրդարանի հաւաքական կարծիքը արտայայտուած է տակաւին մէկ տարի առաջ ընդունուած ԳԽ համապատասխան որոշումով, որով Հայաստանի համար անընդունելի կը համարուի որեւէ որոշում, որ Լեռնային Ղարաբաղը կը գիտեղէ Ատրպէյճանի կազմին մէջ: Այս առումով նշուեցաւ նաեւ, որ ԵԱՀԻ սկզբունքային մօտեցումներէն մէկը՝ սահմաններու անխախտելիութեան սկզբունքը վեր դասելով ազգերու ազատ ինքնորոշման իրաւունքէն, կը ներգայնեն քաղաքական բանակցութիւններու շրջանակները:

Բարձրորէն գնահատելով հակամարտ կողմերու միջեւ վերջերս հաստատուած զինադադարը, խորհրդարանական խմբակցութիւններու ներկայացուցիչները այնուամենայնիւ ԵԱՀԻ պատուիրակութեան անդամներու ուշադրութիւնը հրաւիրեցին այն հանգամանքին վրայ, որ Ատրպէյճանը փաստօրէն ժամանակաւոր հրադադարը օգտագործեց զինուորական նոր յարձակման նախապատրաստուելու համար: Զինադադարի խախտումը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հարաւոր ծաւալած զինուորական վերջին գործո-

«ՀԱՅՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա Տ Ր Պ Է Յ Ճ Ա Ն

Մտահոյութիւն կողկասի Բնական Միջավայրով

Ատրպէյճանի բնապահպանութեան եւ բնական հարստութիւններու օգտագործման նկատմամբ վերահսկողութեան պետական կոմիտէն եւ հանրապետութեան գիտութիւններու ակադեմիան՝ ընդունած են համատեղ դիմում ՄԱԿի կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի հարցերու յանձնաժողովին, ԱՊՀ երկիրներու բնապահպան կազմակերպութիւններու ղեկավարներու եւ գիտութիւններու ակադեմիաներու նախագահներուն: Փաստաբույրին մէջ մասնաւորապէս կ'ըսուի, որ կողկասեան տարածաշրջանը որու բնական միջավայրը անանցողիկ նշանակութիւն ունի մութ անտառային ֆաղափակութեան համար, «Լեռնային Ղարաբաղի մարտական գործողութիւններու հետեւանքով կը գտնուի լիակատար անկման սպառնալիքի ներքոյ»:

\*\*\*

Իրանի Նախագահը Մտահոյ է

Հայ - ատրպէյճանական հակամարտութիւնը դարձաւ Իրանի նախագահ Հաւէմի Ռաֆիսանեանի եւ Ատրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի միջեւ Պաքուի մէջ կայացած պաշտօնական բանակցութիւններուն գլխաւոր նիւթը: Իրանական պետութեան ղեկավարը առանձնակի մտահոգութիւն յայտնեց այն առընչութեամբ, որ մարտական գործողութիւնները ընդհուպ մօտեցած են երկրի սահմաններուն: Ալիեւի խօսքերով «Ատրպէյճանի ղեկավարութեան խաղաղարար ջանքերը տակաւին ցանկալի արդիւնքներ տուած չեն»:

«ՀԱՅՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թրքալեզու երկիրներու Մամուլը կը Միաւորուի

Պոստյ մէջ կայացած է քրքալեզու երկիրներու մամուլի աշխատողներու խորհրդածոյրով որը հրաւիրուած էր այդ պետութիւններու մամուլի միաւորում ստեղծելու նպատակով: Միաւորման ստեղծման ուղիներու, անոր խնդիրներու ու նպատակներու վերաբերեալ առաջարկութիւններով համատեղ խորհուրդներ կ'անցնեն ԵԱՀԻ, Ատրպէյճանի, Ղարաբաղի հանդէս եկած են Թուրքիոյ, Ատրպէյճանի, Ղարաբաղի մամուլի ներկայացուցիչները: Այդ երկիրներու մամուլի աշխատողներէն կազմուած է յանձնաժողով, որը պէտք է նախապատրաստէ միաւորման ծրագրի նախագիծը:

դութիւնները կը հաստատեն, որ Ատրպէյճանը տակաւին չէ ձեռքագտնուած հիմնահարցը զինուորական ուժով լուծելու պատրաստէն:

Իր հերթին, ԵԱՀԻ պատուիրակութեան ղեկավար տիկին Աֆ Ուկլաս նշեց, որ սահմաններու անձեռնմխելիութեան հարցը չի հակասեր քաղաքական բանակցութիւններու եւ խաղաղ նամբով զանոնք վերատեսութեան ենթարկելու հնարաւորութեան: Այս առումով ան կոչ ուղղեց Հայաստանին՝ ներագոյն հակամարտող կողմերու վրայ, տարածաշրջանին մէջ երկարատեւ խաղաղութիւն հաստատելու համար:

\*\*\*

Բարգէն Արարեցեան Ընդունեց ԵԱՀԻ Պատուիրակութիւնը

Հայաստանի խորհրդարանի նախագահ Բարգէն Արարեցեան ընդունեց ԵԱՀԻ նախագահ, Շուէտի արտաքին գործոց նախարար Մարկարէթ Աֆ Ուկլասը եւ անոր ընկերացու պատուիրակութեան ներկայացուցիչները:

Խորհրդարանին մէջ ողջունելով հիւրերը, Բ. Արարեցեան յոյս յայտնեց, որ առաքելութիւնը պիտի նպաստէ ԵԱՀԻ ծիրէն ներս խաղաղութեան գործընթացի աշխուժացման, մանաւանդ որ տարածաշրջանին մէջ լարուածութեան բուլանցման ուղղուած ֆայլերու կշռոյթը այս հանգրուանին ետ կը մնայ դէպքերու զարգացման ընթացքէն: Խորհրդարանի նախագահը նշեց նաեւ, որ հակառակ Հայաստանի Գերագոյն խորհուրդին մէջ քաղաքական ուժերու բազմազանութեան, խորհրդարանը միշտ հանդէս կու գայ դարաբաղեան հակամարտութեան քաղաքական կարգաւորման դիրքերէ, ձգտելով իր հնարաւորութեան ծիրէն ներս ազդել հակամարտութեան գօտիին մէջ զինադադարի հաստատման եւ Ղարաբաղ - Ատրպէյճան երկխօսութեան գործընթացներուն վրայ: Շեշտուեցաւ, որ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները եւ բազմաթիւ յայտարարութիւններու մէջ հաւաստած են հիմնահարցի քաղաքական լուծման իրենց պատրաստակամութիւնը, սակայն որեւէ երկխօսութեան արդիւնաւէտութիւն կրնայ երաշխաւորուիլ միայն ընդունելի լուծման յանգեղձով նաեւ միւս կողմի իրական շահագրգռութեան պարագային: Զրոյցի ընթացքին տիկին Աֆ Ուկլաս եւս համաձայ գտնուեցաւ, որ ԵԱՀԻ ջանքերը ինչ-որ տեղ համարժէք չեն տարածաշրջանին մէջ իրադրութեան սրբնբաց փոփոխու-